

ՎԵՐԱՍՏԱՆԻ

ԱՐՏՈՒՆ ԴԻՊԼՈՄԱՆԻ ԸՆՈՐԶՎԵՅ
«ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ
ՄԱՆԿԱՎԱՐԺԻ» ԿՈՉՈՒՄ



Վրաստանի հինավուրց դպրոցներից մեկի՝ Մառնեուլիի մուկիցիպալտետի Շահումյանի թիվ 1 կրթօջախի տնօրեն Արտուշ Ուռույանը ավանի հայտնի դպրոցը, Ուռույանը մշտապես աջակցել ու նպաստում է դպրոցի աշակերտների, մանկավարժների առաջընթացին ու հաջողություններին եւ մեծ կարեւորություն տալիս պետական լեզվի որակյալ ուսուցմանը: Նա երկրի ողջ տարածքում ակտիվ մասնակցություն է ունենում կրթական տարբեր միջոցառումներին՝ տարիների իր կուտակած գիտելիքներն ու իմացությունը փոխանցելով աշակերտներին: «Վրաստանի հինավուրց դպրոցներից մեկի՝ Մառնեուլիի մուկիցիպալտետի Շահումյանի թիվ 1 կրթօջախի տնօրեն Արտուշ Ուռույանը արժանացել է «Վաստակավոր մանկավարժ» կոչման: Նրան շնորհվել է նաեւ ավագ ուսուցչի կարգավիճակ: Արտուշ Ուռույանը նաեւ Պատվո շքանշանակիր է, որը ստացել է 2003 թվականին Վրաստանի նախագահի կողմից՝ երկրի կրթական համակարգի բարեփոխումների գործընթացում երիտասարդների կրթության եւ դաստիարակության մեջ հասարակական ակտիվ մասնակցության եւ անձնական ավանդի համար:

Վրաստանի հինավուրց դպրոցներից մեկի՝ Մառնեուլիի մուկիցիպալտետի Շահումյանի թիվ 1 կրթօջախի տնօրեն Արտուշ Ուռույանը արժանացել է «Վաստակավոր մանկավարժ» կոչման: Նրան շնորհվել է նաեւ ավագ ուսուցչի կարգավիճակ: Արտուշ Ուռույանը նաեւ Պատվո շքանշանակիր է, որը ստացել է 2003 թվականին Վրաստանի նախագահի կողմից՝ երկրի կրթական համակարգի բարեփոխումների գործընթացում երիտասարդների կրթության եւ դաստիարակության մեջ հասարակական ակտիվ մասնակցության եւ անձնական ավանդի համար:

Շնորհավորելով տնօրենին՝ դպրոցի ֆեյսբուքյան էջում մանկավարժներն ու աշակերտները երախտագիտությամբ հայտնում են, որ տասնյակ տարիներ արժանապատվորեն ղեկավարելով

դելիս: Այդով, վաստակավոր մանկավարժը նաեւ հետաքրքրություն ու սեր է արթնացնում Վրաստանի պատմության, մշակույթի հանդեպ եւ երկրի ապագայի կերտման հարցում: «Վրաստան» թերթը միանում է մանկավարժական կազմի եւ աշակերտների շնորհավորանք-բարենաղթանքներին, մեր թերթի լավագույն բարեկամներից մեկին՝ Արտուշ Ուռույանին՝ մաղթելով քաջառողջություն ու եռանդ որպեսզի դեռ երկար տարիներ ղեկավարի իր սիրելի կրթօջախը՝ կրկնապատիկ փորձ-իմաստությամբ ու դեռ երկար տարիներ վայելի իր աշակերտների հաջողություններով հպարտանալու բերկրանքը:

ԲՈՒՐ

«1+4» ԾՐԱԳՐՈՎ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ Ե ՎՐԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Վրաստանում այս տարի միասնական ազգային քննություններին գրանցված եւ բուհ ընդունված ուսանողների թիվը համեմատաբար մեծ է, մեծ է նաեւ «1+4» ծրագրով ընդունված ազգային փոքրամասնությունների թիվը: Բուհերի դասախոսների խոսքով, զգացվում է նաեւ դրական դինամիկա «1+4» ծրագրով ընդունվող ուսանողների պետական լեզվի իմացության եւ սովորելու ցանկության առումով:

Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանի դասախոս Լեւա Ջեջելավան երկար ժամանակ է արդեն՝ դասավանդում է ազգային փոքրամասնության ներկայացուցիչներին վրաց լեզվի նախապատրաստական կուրսում:

Կարծում են, «1+4» ծրագիրն ամենամեծ բարեփոխումներից մեկն է ազգային փոքրամասնությունների ինտեգրման տեսանկյունից, ծրագրին ակունքներում կանգնած լինելով եւ դասավանդելով «1+4» ծրագրի ուսանողներին, կարող են ասել, որ կատարվել է հսկայական փոփոխություն:

Իմ փորձից ելնելով՝ կարող եմ հաստատել, որ նախապատրաստական կուրսի ուսանողն այսօր մի քանի անգամ ավելի ազատ է ինտեգրված մթնոլորտում է սովորում, շփվում այլազգի ուսանողների հետ, - նշում է Լեւա Ջեջելավան եւ հավելում, որ «1+4»-ի ուսանողներն իրենց զգում են Վրաստանի լիիրավ ու լիարժեք քաղաքացիներ:

Այս ամենին զուգահեռ, սակայն ինձ տխրեցնում է, որ շատ ուսանողներ, համալսարանն ավարտելուց հետո, դժվարանում են աշխատանքի տեղավորվել

իրենց համայնքում, - ընդգծեց Լեւա Ջեջելավան:

Այս տարի, ինչպես եւ նախորդ տարի, մրցակցությունը բավական բարձր էր, թեեւ ընդունված ուսանողների թիվն իսկապես տպավորիչ է, իսկ վրացերենի ուսուցման ծրագրին 1300-ից ավելի դիմորդ դարձավ ուսանող: Ունենք նաեւ 100 տոկոսանոց դրամաշնորհատերեր, սա վերաբերում է ե՛ւ հայ, ե՛ւ ադրբեջանցի դիմորդներին, - ասաց Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի դասախոս Ժաննա Խաչատուրյանը եւ հավելեց, որ ուսանողների թիվ աճը փաստում է, որ պետական լեզուն առաջնային է դարձել ազգությամբ ոչ վրացի բնակչության համար:

Այն, որ պետական լեզուն առաջնային է դարձել ոչ վրաց բնակչության, մասնավորապես՝ Սամցխե-Ջավախեթի երիտասարդ սերնդի շրջանում, հաստատվում է «1+4» ծրագրում ընդգրկված ուսանողների թվով, ինչպես Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում, այնպես էլ՝ ընդհանրապես բոլոր բուհերում, որտեղ գործում է մշակված ծրագիրը, տարեցտարի ավելանում է ուսանողների թիվը, - ասաց Ժաննա Խաչատուրյանը:

տուրյանը: Նա նշեց նաեւ, որ պետական լեզվի ուսուցման առումով ընդհանուր պատկերը դեռեւս խնդրահարույց է:

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչ քաղաքացիների պետական լեզվի յուրացման խնդիրը սոցիալ-քաղաքական ինտեգրմանը խոչընդոտող խնդիրներից գլխավորն է: Կցանկանալի, որ պետությունն է՛լ ավելի արդյունավետ քայլեր ձեռնարկեր բուհերի շրջանավարտների աշխատանքի տեղավորման հարցում, որն էլ ինքնին կբարձրացներ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ ուսանողների մոտիվացիան, - ասաց Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի դասախոսը:

Ավելացնենք, որ Վրաստանի քննություններն են գնահատման ազգային կենտրոնի տվյալներով, Վրաստանում այս տարի 41 հազար դիմորդից 32 հազար 200-ը ուսանող են դարձել:

2021-ի համեմատ, 55-ով ավելացել է նաեւ ազգությամբ հայ դիմորդների թիվը: Եվ եթե 2021 թվականին ընդհանուր ունակությունների քննություն հայոց լեզվով հանձնել էր 502 դիմորդ, եւ նվազագույն շեմը հաղթահարել դիմորդների 63 տոկոսը, ապա այս տարի 572 դիմորդից նվազագույն շեմը հաղթահարել է 75 տոկոսը:

Անցյալ տարի հայոց լեզվով ընդհանուր ունակությունների քննություն հանձնած դիմորդներից 100 տոկոսանոց դրամաշնորհ է ստացել 39, իսկ այս տարի՝ 46 դիմորդ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԹՅԱՆ

ՔԻՇՆԱՍԱԿԻ ԽՈՍՔ

93 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ ԻՐ ՄԱՀՎԱՆԱՅՈՒՆ ԿՆԵՔՅ՝ ՎՐԱՍՏԱՆՅԻ ԱՌԱՋԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԶԵՄՊԻՈՆ, «ՎՐԱՍՏԱՆԻ 20-ՐԴ ԴԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՆՐՈՐԴ» ՌԱՖԱՅԵԼ ԶՄԵԿՅԱՆԸ



...Շատ քիչ, ընդամենը յոթ տարի էր մնացել նրան 100-ամյա հոբելյանը նշելու համար:

93 տարեկան հասակում մահացել է թբիլիսցի լեգենդար ծանրորդ, 1952 թվականի գերթեթեւ քաշային կարգում XV Օլիմպիական խաղերի չեմպիոն, «Վրաստանի 20-րդ դարի լավագույն ծանրորդ»-ն «Սպորտի ասպետ», աշխարհի տասնմեկակի ռեկորդակիր, աշխարհի երկակի (1954 եւ 1955թթ.), Եվրոպայի վեցակի (1950, 1952, 1954, 1955, 1956, 1957) եւ Խորհրդային Միության հնգակի չեմպիոն (1949, 1951, 1954, 1955, 1960), Համաշխարհային ունիվերսիադայի (1951թ.) ոսկե մեդալակիր, սպորտի վաստակավոր վարպետ, միջազգային կարգի մրցավար, Պատվո շքանշանի ասպետ, Վրաստանի ծանրամարտի ազգային ֆեդերացիայի պատվավոր փոխնախագահ, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Ռաֆայել

Զմեկյանը: Ռաֆայել Զմեկյանը Խորհրդային Միության օլիմպիական հավաքականի կազմում վրաստանցի առաջին օլիմպիական չեմպիոնն էր, նրանից հետո օլիմպիական ոսկե մեդալներ նվաճեցին նաեւ վրաստանցիներ Դավիթ Ցիմակուրիձեն եւ Սգիա Ջուրեղին:

Արտակարգ արի, հուճորի բացառիկ զգացումով շնորհված, ծնունդով թբիլիսցի Ռաֆայել Զմեկյանը միշտ հպարտությամբ էր խոսում իր ծննդավայրի մասին, միշտ հպարտանում էր իր ծնողների՝ Արկադի Զմեկյանի եւ Լիմոն Բերիձեի հայ-վրացական ընտանիքով:

Ռաֆայել Զմեկյանն այն անհատականությունն էր, ով առաջինը հարթեց վրաց ծանրամարտի առաջընթացի ուղին, որտեղով անցան վրաց ճանաչված ծանրամարտիկներ Շանիձեն, Կախիաշվիլին, Ասանիձեն, Տալախաձեն...

Ռաֆայել Զմեկյանն այն անձնավորությունն էր, ով մեր քաղաքին, հանրությանը կոլորիտ էր հաղորդում, հուսադրում, աջակցում: Զենց այսպիսին էլ կմնա Ռաֆայել Զմեկյանն իրեն ճանաչող բոլոր մարդկանց սրտերում: Ռաֆայել Զմեկյանի մահվան կապակցությամբ իրենց ցավակցությունն են հայտնել Վրաստանի Ազգային Օլիմպիական կոմիտեն, Վրաստանի ծանրամարտի ազգային ֆեդերացիան:

Չանրահռչակ ծանրորդի մահվան կապակցությամբ իր ցավակցական ուղերձում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին գրել է.

«...Մեծ ցավ եմ ապրում՝ լսելով անվանի ծանրորդ Ռաֆայել Զմեկյանի մահվան լուրը: Մարզական նվաճումները Ռաֆայել Զմեկյանին դարձրին վրացական սպորտի իսկական լեգենդ, համաշխարհային ծանրամարտի կարկառուն դեմքերից մեկը: Իմ անկեղծ ցավակցությունն են հայտնում պարոն Ռաֆայելի ընտանիքի անդամներին ու հարազատներին»:

Սեպտեմբերի 29-ին կայացավ Ռաֆայել Զմեկյանի հուղարկավորությունը: Դիմորդի գերեզմանում հրաժեշտի խոսքով ելույթ ունեցան Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար Թեա Ծոլուկիանին, Վրաստանի Ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Լեռնա Խաբելովը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանը, Վրաստանի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ, Օլիմպիական XXV, XXVI, XXVII խաղերի եռակի չեմպիոն (1992-2000թթ.) Կախա Կախիաշվիլին, Օլիմպիական XXVIII խաղերի չեմպիոն Գիորգի Ասանիձեն (2004 թ):

«Վրաստան» թերթն իր խորին վշտակցությունն է հայտնում հանրաճանաչ ծանրորդ Ռաֆայել Զմեկյանի մահվան կապակցությամբ, ցավակցում հանգուցյալի ընտանիքի անդամներին, հարազատներին, բարեկամներին, ընկերներին:

ՑԱՎԱԿՑԱԳԻՐ

Թբիլիսին հրաժեշտ տվեց իր արժանավոր զավակներից մեկին՝ Ռաֆայել Զմեկյանին: Լեգենդար մարզիկը Թբիլիսիի հայոց դարավոր պատմության բացառիկ անհատներից է, ում կյանքի փառահեղ ճանապարհը ուղեմիջ է գալիք սերունդների համար:

Աստված շոյալորեն պարգեւել էր նրան իր շնորհները, որոնց զուամարվելով հայրենի իր դաստիարակությունը, թբիլիսցու արժանապատվությունը: Զմեկյանը համաշխարհային հռչակ բերեց իր ժողովրդին, հարազատ քաղաքին ու իր երկրին՝ վաստակելով բոլորիս սերն ու արժանանալով Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչմանը:

Ռաֆայել Զմեկյանի կենաց ճանապարհը զարդարված է բազում հաղթանակներով: Մեծ սիրով ու հպարտությամբ՝ որպես հիշատակի պսակ, մեր խոնարհունն ենք բերում աշխարհահռչակ մարզիկի ու ազնիվ քաղաքացու հիշատակին:


Տխրության պահին ցավակցում ենք հանգուցյալի բոլոր հարազատներին ու բարեկամներին: Թբիլիսիի հայոց հնամենի եկեղեցիներում մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված պանծալի հայորդու հոգու հանգստության համար: Թող նրա հիշատակը միշտ վառ մնա սերունդների սրտում, նրա կյանքն ու գործը օրինակ դառնան մեր երեխաների համար՝ ի փառս մեր ժողովրդի Վրաստանում եւ համայն աշխարհում:

ՏԵՐ ԿԻՐԱՎՈՍ ՎՈՐԱԿԵՏ ԴԱԿԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ԱՅԼԱԶԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՐԱՏԱԴ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ



Դատելով իմ շրջապատից՝ գործազրկության մակարդակը բավական բարձր է. թեև կառավարության հայտարարություններում երբեմն հնչում են թվեր, որոնք այդքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Գուցե դ՞ի՞ք օգնեք հստակ պատկերի ներկայացման հարցում:

Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նիւնոմինդա

Յավոք, երկրում գործազրկության մակարդակը, չնայած կառավարության ձեռնարկած միջոցների, դեռևս բավական բարձր է, թեպետ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ, նվազել է 4 տոկոսով: Մասնավորապես, 2022 թվականի երկրորդ եռամսյակում աշխատունակ 1 551,5 հազար քաղաքացիներից աշխատանքով ապահովված է 1 269,9 հազարը, այսինքն՝ գործազուրկ է 281,6 հազար մարդ (աշխատունակ բնակչության 18,1 տոկոսը):

Երկրորդ եռամսյակում Վրաստանում գործազրկության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: Նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, կանանց մոտ գործազրկության ցուցանիշը նվազել է 3,8, իսկ տղամարդկանց մոտ՝ 4,0 տոկոսով:

Ըստ Geostat-ի՝ աշխատուժի մասնակցության մակարդակը տղամարդկանց շրջանում ավելի բարձր է, քան կանանց շրջանում: 2022 թվականի երկրորդ եռամսյակում կանանց շրջանում նշված ցուցանիշը կազմել է 40,8, իսկ տղամարդկանց մոտ՝ 64,2 տոկոս:

Եվս մեկ հետաքրքիր համեմատանք. Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2022 թվականի

հունիսին

ԳՐԵԹԵ 10 ՏԱՐՈՎ ՄԱՅՎԱՆ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Առողջապահության վերաբերյալ նյութերում հաճախ է ընդգծվում մարդու սննդակարգում բանջարեղենի ու մրգերի նշանակությունը, քանի որ դրանք հարուստ են օրգանիզմի համար անհրաժեշտ վիտամիններով: Կոնկրետ ինչ՞ով են օգտակար բանջարեղենն ու մրգերը:



Գուրջանի

Նախ միանգամից նշենք, որ բավականաչափ քանակությամբ բանջարեղենն ու մրգերը, որոնք հարուստ են սննդային թելերով եւ վիտամիններով, գրեթե 10 տոկոսով նվազեցնում են մահվան ռիսկը: Ճապոնիայի Ազգային ուռուցքաբանական կենտրոնի աշխատակիցները դեռևս անցյալ դարի 90-ական թվականների սկզբից դիտարկել են ճապոնիայի 11 պրեֆեկտուրաների, ներառյալ՝ Տոկիոյի շուրջ 95 հազար բնակիչների:

Վանդություններից մահերին, ապա այդ ցուցանիշը 13 տոկոսով պակաս է: Իսկ բանջարեղենի գործածության մասին խոսելիս, ասենք, որ այն մարդկանց մոտ, ովքեր կանոնավորապես գործածում են սննդում, մահերի ռիսկը ցածր է եղել 7-8 տոկոսով:

Յետազոտության սկզբի պահին նրանք եղել են 40-60 տարեկան: Հիմնական ուշադրությունը նվիրվել է սննդաբաժնին եւ օրական գործածվող բանջարեղենի ու մրգերի քանակին: Արդյունքում նրանք բոլորը բաժանվել են հինգ խմբի՝ կախված հիշյալ մթերքների գործածության ծավալից: Մինչեւ այժմ 95 հազարից մահացել է շուրջ 24 հազար մարդ:

Տարբեր պատճառներից, ներառյալ՝ քաղցկեղային եւ սիրտանոթային հիվանդությունները, մահվան ռիսկ գործակիցը հաշվարկվել է՝ էլեմենտալ բանջարեղենի ու մրգերի ամենաքիչ գործածությամբ խմբերում մահացության վիճակագրությունից: Ըստ որում, ճապոնացի մասնագետները հաշվի են առել հետազոտության մասնակիցների առողջական վիճակը, սովորությունները, ժառանգական հիվանդությունները, մարմնի զանգվածի ինդեքսը եւ այլ պարամետրեր, որպեսզի բացառեն այդ գործոնները վերջնական արդյունքից: Իրենց հետազոտության մեջ ճապոնացի գիտնականները խորհուրդ են տալիս հետեւել սննդաբաժնին ու օրական գործածել առնվազն 300 գրամ բանջարեղեն եւ 140 գրամ միրգ:

Յետազոտության արդյունքների համաձայն, մրգերի մեծ գործածությամբ երկու խմբերից մահվան ռիսկը 8-9 տոկոսով եղել է ցածր, քան ամենացածր գործածությամբ խմբում: Ինչ վերաբերում է սրտի հի-

ԻՍԿ ԻՆՉ Է ՄԵՐ ՈՏՔԵՐԻ ՏԱԿ ԵՎ ՄԵՐ ԳԼԽԱՎԵՐԵՎՈՒՄ

ԶԱՐՄԱՆԱԽ ՓԱՍՏ՝ ԱՆՍԱՀԱՆ ՏԻԵՉԵՐՔԻ, ՆՐԱ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԵՆՔ ՀԱՏ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԵՆՔ ՏԵՂԵԿԱՅՎԱԾ, ԶԱՆ ՄԵՐ ՄՈՂՈՐԱԿԻ՝ ԵՐԿԻՐԻ ՄԱՍԻՆ

Իրոք, 20-րդ դարի կեսերից մարդուն հաջողվեց դուրս գալ տիեզերք, «այցելել» Լուսին, Մարս ուղարկել սարքեր, ուսումնասիրել շատ ավելի հեռուներում գտնվող մոլորակները, թեև «ականատեսի» ոչ մի էական փաստարկ չունենք Երկիր մոլորակի ընդերքի վերաբերյալ: Օրինակ, ի՞նչ է գտնվում 500 կամ ասենք 50 կիլոմետր խորության վրա...

Ստորեւ ներկայացնում ենք այն փաստերը, որոնք Երկիր մոլորակի վերաբերյալ հաջողվել է պարզել մարդկությանը:

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ԵՐԿԻՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Երկրի արտաքին հատվածը նույնպես բաղկացած է մի քանի շերտերից, որոնք խմբավորում են բոլոր երկրային տարրերը: Հիդրոսֆերա. Ջրի ընդերքի ամբողջությունն է, որը գոյություն ունի երկրի ընդերքում: Բոլոր ծովերն ու օվկիանոսները, լճերն ու գետերը, ստորերկրյա ջրերը եւ առցաղաշտերը կարելի է գտնել: Հիդրոլոգիայում ջուրը շարունակական փոխանակման մեջ է: Այն չի մնում ֆիքսված տեղում: Դա պայմանավորված է ջրի ցիկլով:

Միայն ծովերն ու օվկիանոսները զբաղեցնում են երկրագնդի ամբողջ մակերեսի երեք քառորդը, ուստի նրանց կարելու է մոլորակային մակարդակում մեծ է: Հիդրոսֆերայի շնորհիվ է, որ մոլորակն ունի իր բնորոշ կապույտ գույնը:

Մեծ քանակությամբ լուծված նյութեր հայտնաբերվում են ջրային մարմիններում եւ ենթարկվում մեծ ուժերի: Դրանց վրա գործող ուժերը կապված են երկրի պտույտի, լուսնային ներգրավման եւ քամիների հետ: Դրանց պատճառով տեղի են ունենում ջրային զանգվածների շարժումներ, դրանք են օվկիանոսի հոսանքները, ալիքները եւ մակընթացությունները: Այս շարժումները մեծ ազդեցություն ունեն համաշխարհային մակարդակի վրա, քանի որ դրանք ազդում են կենդանի էակների վրա: Կլիմայի վրա ազդում են նաեւ ծովային հոսանքները՝ El Niño- ի կամ La Niña- ի մասն էՖեկտներով:

Ինչ վերաբերում է քաղցրահամ կամ մարցանաբային ջրերին, ապա կարող ենք ասել, որ դրանք շատ կարելու են մոլորակի գործունեության համար: Դա պայմանավորված է նրանով, որ դրանք կազմում են երկրի մակերեսային ամենաարդյունավետ քայքայիչ նյութերը:

Մթնոլորտ. մթնոլորտը գազերի շերտն է, որը շրջապատում է ամբողջ Երկիրը, որոնք կարելու են կյանքի զարգացման համար: Թթվածինը կյանքի օդափոխիչ գազն է, ինչպես մեզ հայտնի է: Բացի այդ, շատ գազեր օգնում են գտել արեւի ճառագայթումը, որը կարող է մահացու լինել կենդանի էակների ու էկոհամակարգերի համար:

Մթնոլորտը բաժանված է տարբեր շերտերի, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր երկարություն, գործառնայն եւ կազմ:

Տրոպոսֆերան դրանցից մեկն է, որն ուղղակի գտնվում է երկրի պինդ մակերեսի վրա: Դա շատ կարելու է, քանի որ դա հենց այն վայրն է, որտեղ մենք ապրում ենք, եւ այն, որը ծնում է օդերևութաբանական երևույթներ, ինչպիսիք են ամպերները:

Ստրատոսֆերան հաջորդ շերտն է, որը տարածվում է տրոպոսֆերայի մոտ 10 կմ վերելում: Այս շերտում ուլտրամանուշակագույն ճառագայթների պաշտպանությունն է: Դա օգնային շերտն է:

Միջազգային ետեւում է, ավելի բարձր եւ պարունակում է նաեւ օզոն:

Rտերմոլորտ այն այսպես է կոչվում, քանի որ արեւային ճառագայթման ազդեցության պատճառով ջերմաստիճանը կարող է գերազանցել 1500° C: Դրանում կա մի տարածք, որը կոչվում է իոնոսֆերա, որում շատ ատոմներ կորցնում են էլեկտրոնները եւ իոնների տեսքով են ազատելով հյուսիսային լույսերը կազմող էներգիան:

Կենսոլորտ. Կենսոլորտը բուն Երկրի շերտը չէ, բայց գոյություն ունեցող բոլոր էկոհամակարգերի ամբողջությունն է: Բոլոր կենդանի էակները, որոնք բնակվում են մեր մոլորակում, կազմում են կենսոլորտը: Յետեւաբար, կենսոլորտը երկրի ընդերքի, բայց նաեւ հիդրոսֆերայի եւ մթնոլորտի մի մասն է:

Կենսոլորտին հատուկ է կենսաբազմազանությունը: Այն մոլորակի վրա հայտնաբերված կենդանի էակների եւ կյանքի բոլոր ձեւերի մեծ բազմազանությունն է: Բացի այդ, կենսոլորտի բոլոր բաղադրիչների միջոցով կա հավասարակշռության հարաբերություն, որը պատասխանատու է ամեն ինչի պատշաճ գործելու համար:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

- Կյանքն անվերջանալի կատարելագործում է: Սեփական անձը կատարյալ համարել, նշանակում է ինքնասպան լինել:
Ֆ.ԳԵՔԵԼ
Իրենից դժգոհ լինելը խելացի կյանքի անհրաժեշտ պայմանն է: Միայն այդ դժգոհությունն է մղում աշխատել եսի վրա:
Լ.ՏՈՒՍՏՈՅ
Ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է:
ԽՈՍԵ ՄԱՐՏԻ
Քեզ վրա կարգի հարյուր ուսուցիչ՝ նրանք անգոր դուրս կգան, եթե դու չես կարող ինքդ քեզ ստիպել ու պահանջել քեզանից:
Վ.ՍՈՒՄՆՈՒԼԻՆՍԿԻ
Բարքերն ավելի հեշտությամբ են փչանում,

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

քի օդափոխիչ գազն է, ինչպես մեզ հայտնի է: Բացի այդ, շատ գազեր օգնում են գտել արեւի ճառագայթումը, որը կարող է մահացու լինել կենդանի էակների ու էկոհամակարգերի համար:

Մթնոլորտը բաժանված է տարբեր շերտերի, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր երկարություն, գործառնայն եւ կազմ:

Տրոպոսֆերան դրանցից մեկն է, որն ուղղակի գտնվում է երկրի պինդ մակերեսի վրա: Դա շատ կարելու է, քանի որ դա հենց այն վայրն է, որտեղ մենք ապրում ենք, եւ այն, որը ծնում է օդերևութաբանական երևույթներ, ինչպիսիք են ամպերները:

Ստրատոսֆերան հաջորդ շերտն է, որը տարածվում է տրոպոսֆերայի մոտ 10 կմ վերելում: Այս շերտում ուլտրամանուշակագույն ճառագայթների պաշտպանությունն է: Դա օգնային շերտն է:

Միջազգային ետեւում է, ավելի բարձր եւ պարունակում է նաեւ օզոն:

Rտերմոլորտ այն այսպես է կոչվում, քանի որ արեւային ճառագայթման ազդեցության պատճառով ջերմաստիճանը կարող է գերազանցել 1500° C: Դրանում կա մի տարածք, որը կոչվում է իոնոսֆերա, որում շատ ատոմներ կորցնում են էլեկտրոնները եւ իոնների տեսքով են ազատելով հյուսիսային լույսերը կազմող էներգիան:

Կենսոլորտ. Կենսոլորտը բուն Երկրի շերտը չէ, բայց գոյություն ունեցող բոլոր էկոհամակարգերի ամբողջությունն է: Բոլոր կենդանի էակները, որոնք բնակվում են մեր մոլորակում, կազմում են կենսոլորտը: Յետեւաբար, կենսոլորտը երկրի ընդերքի, բայց նաեւ հիդրոսֆերայի եւ մթնոլորտի մի մասն է:

Կենսոլորտին հատուկ է կենսաբազմազանությունը: Այն մոլորակի վրա հայտնաբերված կենդանի էակների եւ կյանքի բոլոր ձեւերի մեծ բազմազանությունն է: Բացի այդ, կենսոլորտի բոլոր բաղադրիչների միջոցով կա հավասարակշռության հարաբերություն, որը պատասխանատու է ամեն ինչի պատշաճ գործելու համար:

Խիստ պատժեք:

- Տիկին, եթե ուզում ես՝ ամուսինդ խիստ պատժվի, ուրեմն՝ մի բաժանվիր:

© Զինացին ամերիկացու մոտ գլուխ է գովում:

- Մեր բնակչության քանակը շուտով 1,5 միլիարդից կանցնի:

- Չեմ հասկանում, զարմանում է ամերիկացին,- մի՞թե չինացիներն ուրիշ զբաղմունք չունեն:

քան ուղղվում:

Լ.ՎՈՒՆՆԱՐԳ
Բոլոր ասույթներում հարկ է լինում ճշմարտությունը որոշ չափով զոհաբերել հակիրճությանը:

Ս.ՋՈՒՍՈՒ
Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ սիրել չի կարող:

Ջ. ԲԱՅՐՈՆ

Եթե ցանկանում եք մարդկանց հետ պահպանել բարի հարաբերություններ, ապա մի ընդհատեք, երբ նրանք ստում են:



Ա.ՈՍՏՈՍՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող ԲԼՈՒՄԻ մունիցիպալիտետ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՅԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆԳՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՊԵՏՔ Է ՇԱՐԺԿԵՆՔ ԵՐԵՔ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ»

Սեպտեմբերի 29-ի Հայաստանի կառավարության նիստում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց երեք հիմնական ռազմավարական ուղղություններ, որով ընթանալու է երկիրը:


- Ինձ համար ակնհայտ է, որ մենք 3 հիմնական ռազմավարական ուղղություններով պետք է շարժվենք: Իհարկե, 3 ուղղությունները չեն բացառում մյուսները: Բայց 3 ուղղություն ուզում են շեշտել. առաջինը՝ մենք պետք է բոլոր ջանքերը գործադրենք Հայաստանի շուրջ տեւական խաղաղություն ու կայունություն հաստատելու ուղղությամբ, երկրորդը՝ պետք է հետեւողական շարունակենք կրթության ոլորտում

մեր բարեփոխումները, եւ կրթության ոլորտում մեզ պետք են տական խոշոր պետական ներդրումներ, եւ հաջորդը՝ բանակում պետք է հետեւողական բարեփոխումներ իրականացվեն. - ասաց վարչապետը: Ըստ Փաշինյանի, այս երեք օրակարգային առաջնահերթությունները պետք է դառնան այն լոկոմոտիվը, որով պետք է առաջնորդել Հայաստանը այս համաշխարհային փոթորկի մեջ:




ՎԵՋԱՓՈՒԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՀԱՋՈՐԴԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, սեպտեմբերի 22-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացավ Հայաստանի Հանրապետության եւ Արցախի նախկին նախագահների հանդիպումը: Ստորեւ ձեռ ուշադրության ենք ներկայացնում վերոնշյալ հանդիպման կապակցությամբ Հայաստանի երեք նախկին նախագահների դիրքորոշումները:



Սուրբ Էջմիածնում կայացած հանդիպման ավարտին, Պետրոս Դազարյանի հետ հարցազրույցում, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության հաջորդած եթերում, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Հայաստանը հայտնվել է ծանր վիճակում եւ սպասվում են ցավոտ որոշումներ: Թուրքիայի եւ Ադրբեյջանի հետ պայմանագրերի կնքումն անխուսափելի է, ըստ առաջին նախագահի: Ըստ առաջին նախագահի, ընդդիմությունն ու իշխանությունը պետք է երկխոսեն, որպեսզի առկա բոլոր հնարավոր լուծումներից ընտրեն ամենաքիչ ցավոտ լուծումը:

Այս ընթացիկ թեմաների շուրջ իրավիրված հատուկ մամուլ ասուլիսում, ամերիկացի-ամերիկացի Վաշինգտոնի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ նույն սեղանի շուրջ նստելու եւ քննարկումներ ունենալու թեմային, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը նշեց. - Մարդիկ, չգիտես ինչու, ֆիքսվել են մի պատկերի վրա. սեղան, որի շուրջ նստում են Նիկոլ Փաշինյանն ու նախագահները: Ես այդ պատկերի համար չեմ իմ տեսակով, բայց այս վիճակից դուրս գալու համար, այո՛, պետք է քննարկումներ ունենալ, եւ Վեհափառի նախաձեռնությամբ այդ ֆորմատին մասնակցելը նաեւ նպատակ ունի լուծումներ գտնել, փորձել քննարկումներով լուծումների գալ: Տեր-Պետրոսյանի (ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյան- խմբ.) առաջարկը կատեգորիկ անընդունելի էր ինձ համար, բայց մենք չենք ասել, որ վերջ, դրանից հետո էլ չենք գալու: Մենք դուռը բաց ենք թողել քննարկումների համար, ուղղակի խնդիրը հետեւյալն է. մարդկանց մոտ մեծ սպասելիքներ են առաջացել, որ նախկին նախագահներն ու Վեհափառը լուծում են գտնելու այս իրավիճակից դուրս գալու համար: Ժողովուրդը ջան, այս վիճակից լուծումը պետք է առաջարկի, գտնի եւ այդ ճանապարհով տանի իշխանությունը: Եվ, եթե այդ առաջարկն իշխանության կողմից չի եղել, այլ հանրային ինչ-որ պահանջ է ձեւավորվել, ապա այդ սպասելիքների հասցեատերը այդ ֆորմատում չպետք է լինի, - ասաց Քոչարյանը:



Մեկնաբանելով հանդիպման արդյունքները՝ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանն այն կարծիքը հայտնեց, որ այս փուլում Վեհափառ Հայրապետի մոտ նախկին նախագահների մասնակցությամբ քննարկումները տալիս են ստեղծված ծանրագույն վիճակից ելքերը համակողմանի քննարկելու եւ մեր պետությանն ու ժողովրդին իրատեսական, կշռադատված լուծումներ առաջարկելու հնարավորություն: Սերժ Սարգսյանի հավաստմամբ, առողջ դատող քաղաքական ուժերը, հասարակական, քաղաքական միավորումները պետք է շարունակեն ամենօրյա աշխատանքով հասարակության մեջ արթուն պահել պայքարի ոգին:



ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՀԱՍՑԿԵԼ Է 75 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ

Հայաստանում 2023 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը կբարձրանա՝ դառնալով 75 հազար դրամ, գործող 68 հազար դրամի փոխարեն:

Հայաստանի կառավարությունը սեպտեմբերի 29-ի նիստում չգեկուցվող հարցերի թվում հավանություն տվեց նաեւ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ ու լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթին: Ըստ նախագծի, նվազագույն ամսական աշխատավարձի չափը 75,000

դրամ սահմանելու դեպքում, աշխատաշուկայում պետական հատվածի 28,7 տոկոսի (77,483 աշխատողի) եւ մասնավոր հատվածի 31,5 տոկոսի (209,723 աշխատողի) մոտ կավելանա աշխատանքի վարձատրությունը: Այսինքն՝ պետական եւ մասնավոր հատվածներում կավելանա աշխատողների 30,7 տոկոսի (665,546 աշխատողի) վարձատրությունը: Պետական բյուջեում աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերը կավելանան տարե-

կան շուրջ 15,3, իսկ մասնավոր հատվածում՝ շուրջ 94,2 մլրդ դրամով: Այսինքն՝ պետական եւ մասնավոր հատվածներում ընդհանուր առմամբ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերը կավելանան տարեկան շուրջ 109,5 մլրդ դրամով:

Նշվում է նաեւ, որ «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ում որպես թիրախային ցուցանիշ, նախատեսված է 2025 թվականի համար միջին աշխատավարձի չափը 237,000 դրամ, իսկ նախատեսված հավանություններից է միջին աշխատավարձի իրական աճը 5 տարի հետո՝ 30 տոկոսով:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐԻ» ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ

«Թատերական պատանուների» միջազգային արդի միտումներին արվեստասեր հանրությունը կարող է ծանոթանալ սեպտեմբերի 28-ին Երեւանի Գ.Սոււնդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում անցկացվող «Թատերական պատանուներ» միջազգային մրցույթի շրջանակներում, որում ներկայացված է ավելի քան 95 աշխատանք 21 երկրից:

«Թատերական պատանուներ» միջազգային փառատուն մրցույթը Հայաստանում իրականացվում է առաջին անգամ, եւ անցկացվում է Գ.Սոււնդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի 100-ամյակի միջոցառումների շրջանակում: Փառատունին մասնակցության հայտ է ներկայացրել 29 երկրի 177 հեղինակ՝ 406 աշխատանքով: Նախագատման արդյունքում, մրցութային փուլ է անցել 21 երկրի 70 հեղինակի 95 աշխատանք, որոնք ներկայացված են ցուցահան-

դեսի շրջանակում եւ արդեն գնահատվել են սեպտեմբերի 30-ին միջազգային ժյուրիի կողմից: Թատրոնը ներկայացրել է մոտ 30 աշխատանք:

«Թատերական պատանուներ» միջազգային փառատուն մրցույթը իրականացվում է Գ.Սոււնդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի եւ «ԱԿՏ» մշակութային ՀԿ-ի նախաձեռնությամբ: Ցուցահանդեսը հանրության համար բաց է սեպտեմբերի 29-ից մինչեւ հոկտեմբերի 31-ը:

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՊԿ-Ի ՂԵՄԱՎՈՐ ԶԱՐԳՈՒՄԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 29-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասի հետ: ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի սեպտեմբերի 13-ի արտահերթ նիստի որոշման համաձայն, սեպտեմբերի 20-ին Հայաստան է ժամանել Կազմակերպության գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասի ղեկավարած պարզիրակությունը: Առաքելության կազմում ընդգրկված են ՀԱՊԿ անդամ երկրների ներկայացուցիչներ, որոնք կազմակերպության աշխատանքային մարմինների աշխատակիցներ են:

ՏԱՐԻՆ ԿԱՍՏՈՈՎԻ 11-12 ՏՈՒՍ ՏԵՏՍԱԿԱՆ ԱՃՈՎ

Կանխատեսվում է, որ 2022 թվականի արդյունքում Հայաստանի տնտեսական աճը կկազմի 11-12 տոկոս:

Հայաստանի ֆինանսների նախարարության կողմից «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի օրենքի նախագծի ներկայացմանը նշվեց, որ 2022 թվականի 8 ամիսներին տնտեսական ակտիվությունն աճել է 13,9 տոկոսով, ինչի արդյունքում պետբյուջեով սկզբնապես սահմանված հարկային եկամուտների պլանը գերակատարվում է:

«Ներկա տնտեսական զարգացումները հուշում են, որ 2022 թվականը կամփոփենք 11-12 տոկոս տնտեսական աճով: Այս փաստը ինքնին չափ դրական է, բայց գալիք տարվա 7 տոկոս տնտեսական աճն ապահովելու նպատակով պահանջվում է նաեւ, որ արագացնենք այն բարեփոխումները, որոնք պետք է բարելավեն տնտեսության մասնավոր հատվածի պայմանները, ինչպես նաեւ պետբյուջեով ֆինանսավորվող տնտեսական ու սոցիալական ծրագրերի իրականացման արդյունավետությունը»,- ասված է ներկայացված փաստաթղթում:

«ԿՈՄԻՏԱ» ՄԻՋԱԶԳՍԻՆ ՊԵՏԱՌՈՎ ՓԱՌԱՏՈՆ ԵՐԵՎԱՆԻՍ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, Կոմիտասի թանգարան-ինստիտուտը սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 8-ն անցկացնում է «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատունը: Փառատունի մասնակիցներն այցելել են Կոմիտասի անվան պանթեոն, հարգանքի տուրք մատուցել եւ ծաղիկներ խոնարհել Վարդապետի շիրմին: Կոմիտասի ծննդյան 153-ամյակի առիթով անցկացվեց հոգեհանգստյան կարգ: Փառատունի շրջանակներում, հոկտեմբերի 8-ին Հառիճի վանական համալիրում Երեւանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ, հնչելու է Կոմիտասի «Պարարագը» (գեղարվեստական ղեկավար եւ խմբավար՝ Բրիտանյան Ոսկանյան):

COVID-19. ՄԵՎ ՇԱՐՔԱԶՎԱ ԸՆԹԱՃՔՈՒՄ ՉԱՐԱՎՄԱՆ՝ 1 431 ԵՎ ՄԱՇՎՄԱՆ՝ 4 ՊԵՊԸ

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվության, Հայաստանում սեպտեմբերի 19-25-ն ընկած ժամանակահատվածում հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 1431 դեպք: Դեպքերի ընդհանուր թիվը հասել է 442 հազար 875-ի, որից 430 հազար 192-ը՝ առողջացան, 8 683-ը՝ մահվան էլքով: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում առողջացել է 2 133, մահացել՝ 4 մարդ: Կորոնավիրուսային հիվանդությունից այս պահին փաստացի բուժում է ստանում 2 307 բուժառու: Մեկ շաբաթում կատարվել է 5 523 թեստավորում: Թեստավորումների ընդհանուր թիվը հասել է 3 210 961 -ի:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

1.10.2022 ՀՈԿՏԵՄԲԵՐ *Կլայեցու տոն*
 Թարգմա-
 աշակերտների հիշա-
 տակության օր
**3.10.2022 Սուրբ Փո-
 կաս հայրապետի եւ
 առաքյալներին հետեւ-
 ող Երանոսի հիշատա-
 կության օր**
**8.10.2022 Սուրբ
 Թարգմանիչ Վարդա-
 պետների՝ Մեսրոպի,
 Եղիշեի, Մովսես Քեր-
 թողի, Դավիթ Անհաղթ
 փիլիսոփայի, Գրիգոր
 Նարեկացու եւ Ներսես**

նիչ վարդապետների
 հիշատակը Հայ եկեղե-
 ցին տոնում է տարին
 երկու անգամ: Առաջի-
 քը կոչվում է «Տոն սր-
 բոց թարգմանչացն մե-
 րոց Սահակայ եւ Մես-
 րովբայ», իսկ երկրոր-
 րդ «Տոն մեր սուրբ թարգ-
 մանիչ Վարդապետնե-
 րի՝ Սահակի եւ Մեսրոպ
 Մաշտոցի, եւ նրանց
 սուրբ աշակերտների»:
 Տոնը շարժական է:

ԹԵՃ ԳԻԾ

ԲՈՒՐԻՆ ԱՆՀՐԱՃԵՑ
 ՀԵՌԱՆՈՍԱԶԱՄԱՐՆԵՐ

- Շտապ բժշկական օգնություն - 112
- Պարեկային ոստիկանություն - 112
- Հրշեջ-փրկարար ծառայություն - 112
- Պահակային ոստիկանություն - 125
- Գլխավոր տեսչություն - 126
- Տեղեկատու բյուրո - 118 08
- Քաղաքապետարանի թեժ գիծ - 272-22-22
- Առողջապահության նախարարության թեժ գիծ - 15-05
- Ժողովրդական պաշտպան - 299-58-98, 292-24-79
- Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - 1481
- «Թբիլիսի Էներջի»-ի տեղեկատվական ծառայություն - 114, 240-40-04
- «Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն - 227-50-40
- ԹԵԼՄԻԿՈՒ-ի թեժ գիծ - 16 700, (+995 32) 5 000 777
- Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11
- Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - (593) 50-42-52
- Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - 231-03-41, 231-04-21
- Երկաթուղային կայարան - 1331, 2199010
- Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - (599) 74-73-73

«ԹԲԻԼԻՍՈՒՐԱ - 2022»

ԵՐԿԱՍՅԱԸ ԸՆԴՄԻՉՈՒՄԻՅ ՀԵՏՈ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ ՆԵՈՒՄ Է ԻՐ ՏՈՆԸ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԺԱՄԸ 20:00-ԻՆ ԿԱՆՑԿԱՑՎԻ «ՊԱՏՎԱՎՈՐ ԹԲԻԼԻՍՑԻ» ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 1-ին եւ 2-ին Թբիլիսիւն, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված երկամյա ընդմիջումից հետո, կրկին հանդիսավոր ու մարդաշատ պայմաններում, նշում է իր ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան»:

- Համավարակը երկու տարի գրկել էր թբիլիսցիներին թերեւս ամենասիրելի տոնի վայելքից: Այլեւս հնարավորություն ունենք միասին, հանդիսավոր պայմաններում նշել մեր ավանդական տոնը: Նորից կանցկացվեն ցուցահանդեսներ, համերգներ, արդյունաբերական ապրանքների եւ մթերքների տոնավաճառներ, մարզական ու մանկական միջոցառումներ,- հայտարարել է Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն եւ հավելել, որ «Թբիլիսոբայի» շրջանակներում միջոցառումներ կանցկացվեն Ռիդեի զբոսայգում, Լեխա-

խելում, Օրբելիանի, Գուդիաշվիլու փողոցներում եւ Եվրոպայի հրապարակում: Քաղաքապետի խոսքով, «Թբիլիսոբայի» գալա համերգը կանցկացվի Եվրոպայի հրապարակում, հոկտեմբերի 1-ին:
 - Ի սրտե բոլորին հրավիրում ենք «Թբիլիսոբա» տոնին: Անցկացվելիք միջոցառումների շրջանակներում, բնականաբար, կլինի նաեւ «Պատվավոր թբիլիսցի» կոչում շնորհելու հանդիսավոր արարողությունը: Այն կանցկացվի եւ ուղիղ եթերով կհեռարձակվի հոկտեմբերի 2-ին, ժամը 20:00-ին,



Պետական ծիսակարգերի պալատից, հայտարարեց քաղաքապետն ու հավելեց, որ մայրաքաղաքի տոնի միջոցառումների ծրագիրը տեղակայված է քաղաքապետարանի կայք-էջում:

ՄՊՈՐՏ

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ. ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՈՋԱՂԻՄԵՑ ԵՎ «Շ»-ԻՑ ԱՆՑԱՎ «Յ» ԴԻՎԻԶԻՈՆ...

Ֆուտբոլի Ազգերի լիգայի «Շ» դիվիզիոնում հանդես եկող Վրաստանի հավաքականը, 2:0 եւ 2:1 հաշվով հաղթելով վերջին երկու հանդիպումներում, համապատասխանաբար՝ Հյուսիսային Մակեդոնիայի եւ Ջիբրալթարի հավաքականների հետ մրցապայքարում, իր խմբում գրավեց առաջին տեղն ու նվաճեց Ազգերի լիգայի «Յ» դիվիզիոնում հանդես գալու իրավունք:

...ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ «Յ»-ԻՑ ՆԱՀԱՆՁԵՑ «Շ» ԴԻՎԻԶԻՈՆ

Ինչ վերաբերում է մինչ այդ Ազգերի լիգայի «Յ» դիվիզիոնում հանդես եկող Հայաստանի հավաքականին, ապա այն սեփական հարկի տակ 0:5 հաշվով պարտություն կրեց Ուկրաինայի հավաքականի հետ խաղում եւ մրցակցի դաշտում, 2:3 հաշվով զիջելով Իռլանդիայի հավաքականին, իր ակտիվում գրանցած 3 միավորով գրկվեց «Յ» դիվիզիոնում հանդես գալու իրավունքից փոխադրվելով «Շ» դիվիզիոն:

Նշենք, որ Հայաստանի ընտրանիում վերջին խաղերում ցուցաբերած անշուք խաղերի պատճառով, Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիան եւ ազգային հավա-

քականի գլխավոր մարզիչ Խոսեպե Կապառոսը երկկողմանի համաձայնությամբ դադարեցնում են համագործակցությունը. իսպանացի մասնագետն այլեւս չի գլխավորի Հայաստանի ազգային հավաքականը:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանը, սակրեբուլոն, «Արշալույս» եւ «Վրաստան» թերթերը իրենց վճարակցությունն են հայտնում «Արշալույս» թերթի նախկին խմբագիր Մանուկ Կարախանյանին, կնոջ՝ **Արփիկ Հովհաննեսի ԿԱՐԱՆԱՆՅԱՆԻ** մահվան կապակցությամբ եւ ցավակցում են հանգուցյալի հարազատներին, բարեկամներին:



Մառնեուլիի մունիցիպալիտետի Գյուլիբաղ, Խոժոռնի, Չանախչի, Աղբյուրի գյուղերի հանրային դպրոցների մանկավարժական կոլեկտիվները իրենց վճարակցությունն են հայտնում կրթության եւ գիտության նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանին, սիրելի մոր՝ **Ասյա (Ջուլիետա) Դարիբի ՄԱՆՈՒԿՅԱՆԻ** մահվան կապակցությամբ եւ ցավակցում հարազատներին:

	1	2	3		4	5	6			7
8					9					
10					11				12	
			13							
							14			
15	16									
					17	18	19			
20	21			22				23	24	
25				26				27		
28			29							30
	31			32					33	
34										
		35	36		37	38	39	40	41	
						42				43
44		45							46	
							47			
48					49					

Խ Ա Չ Բ Ա Ռ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Վրաց հայտնի գրող ... Ջափարիծ: 2.Քաղաք Հայաստանի Գեղարքունիքի մարզում: 10.Վերջ, վախճան: 11.Հույզ, որը կախված է կանխատեսելի հաջողության հետ: 12.Ետադաս կապ: 13.Մաշտոցյան այբուբենի առաջին զինվորը: 14.Անասուն, կնդակավոր: 15.Վրաստանի մայրաքաղաքի հիմնադիրը ... Գորգասալի: 18.Հնագույն զենք: 20.Ներդրում: 22.Գետ Ֆրանսիայում: 23.Քրիստոնեության նշանը: 25.Հունական այբուբենի 7-րդ տառը: 28.«Ալ Քաղայի առաջնորդ Ուսամա ... Լադեն: 27.Ո՞ր ու ...: 28.Անհետացած պետություն Հյուսիսային Կովկասում: 31.Բագրատունիների մայրաքաղաքը: 32.Բնակավայր Արցախում: 33.Ընտանի թռչուն: 34.Աճռոնի, ձեւ չունեցող: 35.Քաղաք ՌԴ-ում ... Պետերբուրգ: 38.Լծկան անասուն: 40.Կերակրել, կշտացնել: 42.Բույսի տեսակ, դաղձ: 43.Քանգի, որովհետեւ (գրաբարյան): 44.Է.Շեարդնաձեի ստավայրը Թբիլիսիում: 46.Արեգակնային համակարգի մոլորակ: 47.Հրից ծնված, կրակ: 48.Հացաբույսի տեսակ: 49.Օդի շարժումը: **ՈՒՂՂԱՅՆՅՈՒՆ.** 2.Գագանի բերան: 3.Ամենամյա կինոմրցանակաբաշխություն Երեւանում: 5.Հայ

առակազիր Խնկո Ապրո անունը: 6.Քաղցր կարտոֆիլ: 7.Հանգստավայր Վրաստանում, Թբիլիսիի մոտ: 8.Վանքային համալիր Սյունիքի մարզում: 9.Լեզվաբան ... Առաքելյան: 12.Նեգր, սեւամորթ: 16.Վրացի խորհրդային ֆուտբոլիստ: 17.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի նախկին, այժմ Երեւանի կինոյի եւ թատրոնի դերասանուհի ... Թարգյան: 19.Քաղաք Հայաստանի Կոտայքի մարզում: 20.Հեռուստահաղորդավոր ... Լիխտչենկո: 21.«Ինչո՞ւ է աղմկում գետը» ֆիլմի գլխավոր հերոս Ղամբարյանը: 22.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 23.Քաղաք Ուկրաինայում, Սեւ ծովի հնագույն նավահանգիստներից: 24.Հայաստանի խորհրդարանը: 26.«Վարդանանք» վեպի հերոսներից: 29.Ռուսական մակնիշի ավտոմեքենա: 30.Քաղաք Պատմական Հայաստանում: 34.Վիրահայ գրող Ռեմ ...: 36.Մայրը Հովհ.Թումանյանի լեզվում: 37.«Աղջիկ, աղջիկ, մտիկ արա, էս ի՞նչ ... ես տեսա» («Անուշ»): 38.Օժանդակ բայ: 39.Երգչուհի ... Բաբայան: 40.Բաժնի պատմավեպերից: 41.Ծայր, գետի, ծովի, լճի ափ: 45....ամարտիկ, ...աճող: **Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ**

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ֆաբրիկա: 8.Իսանի: 9.Քեն: 10.Խառատ: 13.Ջութակ: 19.Մոնո: 20.Համեմունք: 23.Ծիրան: 24.Սուտակ: 29.Լարան: 31.Զլոտի: 34.Ուռի: 35.Արեւ: 36.Կասետ: 39.Գահ: 41.Կանոն: 43.Ելակ: 46.Ասավ: 48.Քանի: 49.Մուր: 51.Բար: 52.Տեսակետ: 54.Սառա: 56.Նիհար: 57.Բալի: 58.Իկ: 59.Թասակ: 60.Գիվի:

ՈՒՂՂԱՅՆՅՈՒՆ. 1.Արու: 2.Քիստ: 3.Մաքս: 4.Ջինզ: 5.Սա: 6.Դիսկո: 11.Առած: 12.Ապեր: 14.Ում: 15.Ռո: 16.Անիկա: 17.Քուն: 18.Իքս: 21.Մինոր: 22.Մայիս: 25.Ուլիկ: 26.Տա: 27.Արու: 28.Հուրա: 30.Նետ: 32.Լարա: 33.Տեղ: 37.Ալեք: 38.Երան: 39.Գոս: 40.Հովատակ: 42.Նժդեհ: 44.Լառա: 45.Կիրակի: 46.Ագարա: 47.Արեբա: 50.Ուտիք: 53.Սաք: 54.Սիգ: 55.Շիվ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՉՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՔՅՅԵՈ ՅՈՆՁՅՅԵՄՈ: ՄՁՁԸՈՆՈ 0105, Ճ.ՅՄՐԵՅԸՈՆ ԺՅԵՃ 5, ՄԵՐ ԽԱՍԿԵՆ ԹԲԻԼԻՍԻ 0105 Գ.Աթոնելի փ. 5 ԹՅԸ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈՆՈՐ» հրատարակչություն

«ՅՐԱՆԹՅՈՒՆ»
ՄՁՁԸՈՆՈ, ՆՅՅԵՄՅԵՄԸ
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
«VRASTAN»
Georgia, Tbilisi
Индекс 66445